ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՍԻԼ ԼԵՎՍԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն պայքարի և համերաշխության խորհրդանիշ, բուլղարացի ազգային հերոս Վասիլ Լևսկու հուշարձանի տեղադրմանը Երևան քաղաքի Վահագն Դավթյանի անվան զբոսայգում՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՍԻԼ ԼԵՎՍԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բուլղարացի քաղաքական գործիչ, հեղափոխական, Բուլղարիայի ազգային հերոս Վասիլ Իվանով Կունչևը ծնվել է 1837 թվականի հուլիսի 18-ին Բուլղարիայի Կառլովո քաղաքում: Հայտնի է որպես «ազատության առաքյալ», քանի որ մշակել և իրագործել է օսմանյան լծից հայրենի երկիրն ազատագրելու նպատակով համաժողովրդական հեղափոխական շարժում ծավալելու և ապստամբություն կազմակերպելու գաղափարախոսությունն ու մարտավարությունը, երկրով մեկ ստեղծել է հեղափոխական գաղտնի կոմիտեների լայն ցանց ու հեղափոխական կազմակերպություններ: Գործել է հիսունից ավել կեղծանուններով ներկայացել է նաև իբրև հայ՝ Հովհաննես անունով (ի դեպ, *Լևսկի* ծածկանունն էլ կազմել է՝ հիմքում դնելով *лев = առյուծ* արմատը): Վասիլ Լևսկուն ձերբակալել են 1873 թվականին Սոֆիայում, որտեղ Օսմանյան իշխանությունները նրան կախաղան են բարձրացնում:

Վասիլ Լևսկին իր կյանքը նվիրաբերել է հանուն ազատ Բուլղարիայի: Բուլղարիայում և բալկանյան այլ երկրներում կանգնեցված են Վասիլ Լևսկու բազմաթիվ հուշարձաններ, նրա անունով են կոչվել բազում փողոցներ, հրապարակներ, հիմնարկ-ձեռնարկություններ ու կազմակերպություններ:

Հայաստանի համար կարևոր նշանակություն ունի Բուլղարիայի հետ բարեկամական հարաբերությունների և սերտ համագործակցության շարունակական զարգացումը դիվանագիտական, տնտեսական, մշակութային ոլորտներում, ինչի վկայությունը երկու երկրների միջև ստորագրված ռազմավարական գործընկերության մասին համատեղ հռչակագիրն է:

Տեղադրման համար ընտրվել է Վահագն Դավթյանի անվան զբոսայգին՝ որպես հանգիստ, հանրամատչելի և մշակութային բովանդակությամբ հագեցած տարածք, ինչը լավագույնս համապատասխանում է հուշարձանի խորհրդին: Հուշարձանի նախագծային լուծումները համապատասխանում են քաղաքային միջավայրին և չեն խաթարում շրջակա բնապատկերը:

Հուշարձանի պատրաստման և տեղադրման հարցերը իրականացվելու է «Բուլղարիայի հայերի միության» ֆինանսավորմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի ---------- ---ի
N--- Ա որոշման